ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ
ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետ
գեներալ-գնդապետ Յ. Խաչատուրովին

Գոհար Ղազարյանից
բնակվող ք. Երևան, Դավթաշեն 2-րդ թաղ.,
20/1 շ., 22 բն.
հեռ. 096368332

Դ Ի Մ Ո Ւ Մ

Երկար ժամանակ ցանկանում էի դիմել Ձեզ: Սակայն երևի համարձակությունս չէր ներում: Ի վերջո համոզվեցի, որ պետք է ակնկալել Ձեր ուշադիր վերաբերմունքը: Երբ գերսթափ, որպես տնտեսագիտական գիտությունների թեկնածու, բազմիցս վերլուծեցի ամբողջ անցուդարձը և բացառելով ու ընդունելով բոլոր տարբերակները՝ վերջնականապես համոզվեցի, որ Համլետ Քեշիշյանի ասածը Ձեր փոխհարաբերությունների մասին (որ դուք քավոր-սանիկ եք) դարձավ միակ տարբերակը, որոշեցի դիմել Ձեզ՝ որպես Համլետի հովանավորի: Նպատակս մեկն է՝ թեպետ մենք արդեն վերջնականապես հեռացել ենք միմյանցից, բայց այս պահին էլ չեմ ուզում, որ նա հիմնովին արատավորվի: Միևնույնն է, ես հասնելու եմ հարցի օրինական լուծմանը, քանի որ ես ճիշտ եմ: Բայց չէի ուզենա նույնիսկ այս պահին ամբողջովին ներկայացնել Համլետի էությունը, քանի որ նա վերջնականապես կնսեմանա և կհեղինակազրկվի:

Մի քանի փաստ ներկայացնեմ, որպեսզի համոզվեք, որ Ձեր՝ Համլետի հետ ունեցած կապն ակնհայտ է բոլորին: Դեռևս 2002 Պոլիտեխնիկից վատ սովորելու պատճառով "պաշտպանության նախարարության միջնորդությամբ տեղափոխվել է Տնտեսագիտության համալսարան": Եթե սկզբնական շրջանում Պաշտպանության նախարարությունն անդեմ կառույց էր, հիմա արդեն հայտնի է, որ "Պաշտպանության նախարարություն" ասելով նկատի էր ունեցվել Ձեր միջնորդությունը: Տնտեսագիտական համալսարանից էլ անբավարար առաջադիմության համար հեռացվել է, և այստեղ առաջ է եկել նրա վրեժխնդրությունն այն դասախոսների նկատմամբ, որոնք նրան հեռացրել էին բուհից: Բավական չէ, որ նա երկու դասախոսների վրա կրակել է գազային ատրճանակից (ինչպե՞ս է ստացել այդ զենքը նման անհավասարակշիռ հոգեբանական վիճակ ունեցող անձը), ռետինե բռնակով մահակ էլ էր տարել..., իսկ հայրը, ով ՊՆ զորամասի հրամանատար էր, դարձյալ Ձեր ստվերի տակ հոխորդացել էր "Ատրճանակը գազվի չպետք է լիներ, պետք է գյուլլեր քեզ":

Քրեական գործ հարուցվեց նրա նկատմամբ և այնպիսի հոդվածներ առաջադրվեցին, որոնք պետք է բացառեին նրա աշխատանքը խաղաղապահ զորքերում /95532 զորամաս/: Սակայն այն փաստը, որ ինքը դատված է եղել, մոտ մեկ տարի կալանքի տակ է եղել, նա թաքցրել է: Ձեզ հայտնի՞ է, որ Համլետը բանտում որակավորվել է՝ ստանալով "ՇԵՅԽ" մականունը և մասնագիտություն՝ "Խարդախություն", "Գործ տվող" մասնագիտացմամբ: Գերազանց տիրապետելով դրանց՝ էքստեռն ավարտել է: Կալանքից ազատվելուն "Քավորն է նպաստել, էդ հոդվածով չեն ազատում": Համլետը պատմում էր նաև, որ այս անգամ ևս Ձեր զանգերն են եղել՝ Դուք եք միջնորդել նրան վաղաժամկետ ազատելուն: Այդ կենսագրությամբ՝ դատված, խուլիգան... չէին ընդունի խաղաղապահ զորքեր՝ արտասահման մեկնելու հեռանկարով, նորից եղել է Ձեր ցուցումը:

Համլետն ամուսնանալու պահին (21.12.2011թ.) ոչինչ չի ունեցել: Երևի միակ ազնվությունն այն է, որ նա չի վիճարկում, որ տունը, մեքենան ձեռք են բերվել ծնողներիս խնայված միջոցներով և բարեկամներից պարտք վերցնելով, ի դեպ, այդ պարտքերը մինչև հիմա իմ և ծնողներիս վրա են: Ընտանիք էինք, չեմ մտածել իմը, իրենը, ունեցել եմ հնարավորություններ, հանուն ընտանիքի եմ արել, բայց ինքը փորձ է կատարում տիրանալու իմ պարտքով (և վարկով) վերցրած միջոցներին: Եվ քանի որ դրված էր այդ բարիքներից հարկադիր հրաժեշտ տալու հարցը և որպեսզի նա չզրկվի իր էությանը բնորոշ

մերկանտիլիզմից, Համլետը ս.թ. հուլիսի 13-ին զանգահարում է ոստիկանություն և զրպարտում, թե իբր իմ 64 ամյա մայրը սպառնացել է, թե իրեն կսպանի՝ այսպես կիրառելով ակադեմիական գիտելիքները "գործ տվեց":

Որքա՞նով եք Դուք նորմալ ընդունում այն փաստը, որ իր մայրը բնակարանի, իսկ նա մեքենայի տեր են դառնում իմ և իմ հարազատների գումարների հաշվին, որի մասին Դուք քաջատեղյակ եք: "Յունիբանկից" 1200000 (մեկ միլիոն երկու հարյուր հազար) դրամ գումարը դարձյալ ես պետք է վճարեմ: Դուք որպես տղամարդ, որպես զինվորական այր նորմա՞լ եք ընդունում կնոջ հաշվին (մանավանդ, որ նրանից բաժանվել է) նա պետք է հարստանա: Գործուղումից վերադարձել եմ և ինձ իմ տուն չեն թողել: Երևի Դուք էլ կընդունեք, որ նրա կողմից ոչ միայն տղամարդկային, այլև մարդկային չէ, որ նա չի վերադարձնում իմ օժիտը, զարդեղենը, փաստաթղթերը, իմ անձնական ֆոտոալբոմները, 2008-ին Ճապոնիայում ստացած գավաթ և հավաստագրերը:

"Դուք քցված եք" հայտարարելուց անմիջապես հաջորդ օրը՝ հուլիսի 14-ին իմ գործուղման ժամանակ դիմում է դատարան՝ հայցադիմումում նշելով, իբր "... մեր մեջ տեղի են ունեցել կոնֆլիկտներ, հեռացել ենք միմյանցից և բնակվում ենք առանձին: Բացակայում է սերն ու հարգանքը միմյանց նկատմամբ...", այնինչ մենք կապի մեջ ենք եղել և նա աշխատել է նորից ինձ խաբել՝ սիրային նամակներ ուղարկելով: Եթե մենք բաժանվելու էինք և նա այդ նպատակն ուներ, ապա հանգիստ փոխադարձ համաձայնությամբ մենք կարող էինք բաժանվել առանց դատարան դիմելու, բայց դարձյալ գործ տվեց, քաշեց, հարվածեց մեջքից: Համոզված եմ, որ սա Դուք բարոյական վարքագիծ չեք համարում: Իսկ եթե ես էլ նրա նման դատարանում ներկայացնեմ նրա ասածները, արածները, դեմքը, էությունը...

Մի՞թե պարտադիր էր հուլիսի 13-ին "գործ տալ" "...*Ընդանուր* առմամբ մեր ընտանեկան *հարաբերություն ընդացել են նոռմալ*...", հետո վազել դատարան: Սա՛ էլ "գիտելիքների" կիրառում կհամարեմ, չէ՞ որ մենք կարող էինք ԶԱԳՍ-ով օրինական ամուսնալուծվել, բայց ինքը "քցելով" գցվել էր դատարան: Ես ոչ թե դեմ եմ ամուսնալուծությանը, թեպետ ամեն ինչ արել եմ ընտանիքի կապերը էլ ամրապնդելու, ընտանիքը պահպանելու համար, բայց նա չընկալեց: Նույնիսկ հետագա նրա ահաբեկչական գործողությունների՝ ինձ պարտադրելու վարկ վերցնելու, զարդեղենս գրավ դնելու և այլն, և այլն մասին ոչ մեկին տեղյակ չեմ պահել:

Այս պահին նրա արարքը գնահատում եմ Սաֆարովի արարքին համարժեք: Գաղափարական եղբայր "Շեյխ" Համլետ Տիգրանի Քեշիշյանը "մոռթել" է հայ ընտանիքը: Ձեր անունով թող վախեցնեն թշնամիներին, այլ ոչ թե Ձեր հայրենակիցներին:

Ակնկալում եմ Ձեր անհետաձգելի պատասխանը:

Հարգանքներով՝ Գ. Ղազարյան

19.09.2012թ.